ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 50

«27» 09 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 62 ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 25 ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 26-ի՝ Ա.Փանոսյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի պաշտոնում նշանակելու մասին N 263-Ա հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 28-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկելու համար փորձագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» N 62 հրամանի 1-ին և 2016 թվականի մարտի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Պետական և ծառայողական գաղտնիքների շարքը դասվող տեղեկությունների ցանկը մշակող հանձնաժողով ստեղծելու մասին» 2006 թվականի մարտի 13-ի հրամանն ուժը կորցրած ճանաչելու և պետական ու ծառայողական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը մշակող հանձնաժողով ստեղծելու մասին» N 25 հրամանի 2-րդ կետերում՝

«Փանոսյան Արմեն - ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ

ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)»

պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

«Փանոսյան Արմեն - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ